

Սնարը պէտք է ըլլայ Սէննար (Sennar), որ ըստ Ագոնցի Աւխարհագրութեա՛ի (Ափրիկէ, էջ 572), աթոռն էր Նուպիոյ ինքնակալ թագաւորին և կը գտնուէր Նուպիոյ Ֆունկ (Foung) կամ Սիննար նահանգին մէջ:

Յովհաննէս եպօ. Թիւթիւնճի ապահովարար ուղղակի երկիրին մայրաքաղաքը՝ Սէննար գոցած է (Յոյն, էջ 572), մեծ, բազմամարդ և վաճառաշահ քաղաք Նեղոսի վրայ, հարաւային արեւմտեան կողմը, գեղազուարճ բարձրաւանդակի մը վրայ: Բնակիչներուն թիւը աւելի էր, կ'ըսուի, 100.000էն(1). քայքայ շէնքերը անկարգ և խեղճ, ամէնն ալ միայարկ: Միակ նշանաւոր շէնքը արքունի ապարանքն էր, քայքայ սա ալ տեսնելու արժանի բան մը չուէր, վասնզի հաւաքածոյ մըն էր անշուք և անկարգ շինուածներու, չըսելու համար 'իւշակներու, չըջապատուած՝ աղիւսակերտ բարձր պարիսպներով: Երկու մեծ հրապարակներ կամ որգոստաներ (պազարի տեղ) կային այս քաղաքին մէջ, ուր ամէն օր տօնավաճառ կը կազմակերպուէր: Հրապարակներէն մէկուն մէջ, որ «մեծ» կը կոչուէր, կը վաճառուէին բնակչութեան կարեւոր պէտքերը շատ աժան. կ'ըսէին թէ մէկ ուղտը կը վաճառուէր 5 զրշ.ի, եզը 2 զրշ.ի, ոչխարը 20 փարայի, հաւը 1 փարայի, այսպէս ուրիշ ամէն բան. իսկ երկրորդ հրապարակին մէջ, որ արքունի ապարանքին դէմ կը դռնուէր, կը ծախուէին գերիները, գետինը նստած և ոտք ոտքի վրայ դրած, այրերը և տղաքը մէկ կողմ, իսկ կիները և աղջիկները միւս կողմ: Աւոյգ և ուժեղ գերի մը կը ծախուէր միայն 5 վեներախկեան ոսկիի, իսկ միւսները, մանաւանդ կիները,

(1) Ըստ Պասեբրի այսօր 20,000 բնակիչ ունի Բաղաբը: